3 (100). ՋԱԽՃՊԱՆ ԴԻԼԱՆ

Կէղնի չէղնի, մեկ հալիվոր մի կէղնի, էտոր մեկ տղեմի կէղնի։ Ուր մեռնելու օր կը կանչա տղին ու կըսա.

— Տղա՛ լաս՛, ես օր մեռնիմ, իմ հոկու հացն օր կիտաս, մեր գեղ յոթ ջաղաճ կա, կտանիս ալուր էն վեց ջաղաճ կաղաս, էն մեկել՝ Դիլանի ջաղաճ, չէղնի-չէղնի օր էրտաս։

Տղեն ա, պապն օր կը մեռնի, կէրտա էն վեց ջաղաճ դոր չէղնի, չարնաչար կէրտա Դիլանի ջաղաճ, կըսա.

— Դիլա՛ն, առ իմ չորս կոտ ցորեն, աղցի։

— Շատ աղեկ,— կըսա Դիլան,— ընծի լե չորս կոտ կա, բիր, իրարու հետ կաղանք, ետև կը բաժնինք։

Տղեն լե հա՛ կըսա, կաղան կը խըլըսին։

— Տղա՛,— կըսա Դիլան,—համին դու քու հոր հոկուն հաց կիտաս, արի՛ էնինք հ՚ըմեն կլոճ, տար, բաժնա։

Տղեն կավտնա, կըսա.— Թըխ էղնի։

Կէնին կլոճ, կը խըլըսին, Դիլան կըսա.

— Տղա՛, արի սուտ ըսինք, որն օր շա՛տ սուտ ըսեց, մեկել կըլոճներն ու հիտսուն փարա լե տա ընտոր։

— Թըխ էղնի,— կըսա տղեն։

— Մըզի ճետ մի կար,— կըսա Դիլան,— էն հ՚առջի տարին մեր գեղ թանկութեն էղավ, հ՚ելանք, մենք լե ետմիշ տնվոր գեղ ենք, մեր ամսվան պաշար, էղներ, գմշտաներ, կնիկ, մարդ, ճիժ, ջուլ ու փալաս հ՚ըմեն բառծանք էտ ճիտու վրեն ու գածինք Բաղդատ։ Էնտեղ ցորեն հողի պես էր, մածինք հ՚ոն հարի հ՚եժնուտեն հ՚ընկավ մեր էրկիր։ Էլման բառծանք էտ ճիտու վրեն ցորեն ու մեր գեղածիքն ու էկանք։

Դե՛ տղա, սուտ ունիս իտրնե մեծ, ըսա՛, թե չունիս, տուր իմ կլոճներն ու հ՚իտսուն փարեն, գնա։

Դոր էկավ տղին։

— Դիլա՛ն,— ըսեց տղեն,— իմ օղորմած հոկի պապն օր մեռավ, ուր մեռնելուց տարի մի հ՚առեճ տարավ ճանկ մի կորեկ ցանեց։ Եղավ օր կորեկն հասավ, գածինք քաղեծինք, էղավ չորս, հինդ խուռծ. բերինք կամեր լծեծինք ու ծեծեծինք, էրնեծինք, հանեծինք, էղավ Քոսատաղա սարի պես շեղճ մի։ Սել չը կոծանք բերենք օր հորենք։ Հըմա լծինք Քոսատաղա մոտի հորերու մեչ։ Դու մ՚ըսի, հորելու վախտ, թերմաշ մեր վառկըներուց վառեկ մի գիկա, կը մտնի էտ հորերու մեչ, չուրի գարուն մեկ կորեկ կուտա, մեկ հավկիթ կածա։ Կորեկն օր հ՚ըմեն կը դառնա հավկիթ, իտա հաղս կը նստի գըռտան[1], հ՚ըմեն կէղնի վառեկ ու ճետ։ Գարուն գածինք, հորեր բածեծինք։ Բանանք օր ի՞նչ բանանք, հ՚ըմեն էղած ճետ ու վառեկ, էլ չը կոծանք հ՚իրարուց ջոկենք։ Ասսու հրամանկով մեծ քամի մի կայնավ, զարկեց ճիտվանք դեմ հյուսիս տարավ, վառկներ լե դեմ հարավ։

Դե՛, սուտ ունիս, ըսա՛, չունիս տուր իմ կլոճներ ու հ՚իտսուն փարեն։ Ես կէրտամ։

— Ա՜ռ քո կլոճներ ու գնա՛, քու հ՚իտսուն փարեն լե կիտամ,— ըսեց Դիլան։

Տղեն առավ կլոճներ, գնաց։ Մեկել օր շուտ էկավ ուր փարին։

Դիլան օր տղին տեսավ՝ կծկավ։ Էտ տնավրի խասիատ լե հըմալ էր օր՝ թե մեկի մը փարա տեր, էն սըհատուն կը մեռներ։

— Գնա՛,— ըսեց տղին,— լուսուն արի՛, տամ։

Էտ հըմալով քշեց մեկ ամիս։ Դիլան տեսավ օր տղի ձեռնեն ազատվելու հնարք չկա, կը կանճա ուր կնկան, կըսա.

— Կնի՛կ, տղեն օրտա էկավ, ընծի հարծուց, դու լածի, ըսա՝ «Դիլան մեռեր ա»։

Տղեն ա, գիկա կը տեսնի օր հանտա Դիլան հ՚երկնծե գետնի վրեն՝ տուրք ու տալապն ա, կըսա.

— Դիլան, իմ հ՚իտսուն փարեն տո՛ւր, նոր մեռի։

Տղեն կը տեսնի օր Դիլան փարա տալու ըսկի մարամ չունի, խորոտիկ մի կը վառա թունտիր, բարոշ մի ջուր կեռծու, Դիլանի հ՚ոտնեն կը բռնա ու կը մտու էման ջրի մեջ, կըսա.

— Դիլան, իմ հ՚իտսուն փարեն տուր, նոր մեռի։

Դիլան ուրին սուտ մեռել կը թալա, տղեն լե կավտնա։ Կը ճանպին տերտերոջ հ՚ետև։ Տերտեր գիկա, Դիլանին կը տանին հորին։

---

1 Թուխս (Ծ. Բ.)։

Հրմա գերեզման հոլկի պես կը բռնին օր Դիլանին բան չէղնի, ճրաք մը լև կը դնին մոտ։

Կը մնա շուրի հ'իրկուն։ Տղեն կէրտա տերտրոջ կըսա.

— Տերտեր, իղին տուր, էրտամ Դիլանին պայիմ, Դիլան իմ դոստն ա։

— Դր դնա՛, օրհնած, դու դածեր իս, ես չը թո՞րկեր իմ,— կըսա տերտերը։

Տղեն կէրտա Դիլանի գերեզմնի վրեն կը չոքի, ծակ մի կը բանա ու կըսա.— Դիլա՛ն, իմ հ'իտսուն փարեն տուր։

Դիլան ձեն չը հանա. տղեն մեկ էլ կը տեսնի, օր հանտա իրեք հատ քուրտ, խուռճի մի օսկի գողծած՝ նստած գերեզմներու մեջ իրար վրա կը բաժնին։ Տղեն կըսա.

— Գիտի, Դիլա՛ն, ես կը տապիմ, դու պատրնկած հ'ելի, առ ճրակն ու հ'նկի քրտերու հ'ետև։

Դիլան էր, իմալ օր գուտ հ'ելավ, քրտեր օսկին թորկին ու փախան։

Դիլան կառնի փարեն, գիկա։ Կը նստին հ'իրարու վրեն կը բաժնին։ Օր կը խըլըսին, տղեն կըսա.

— Դիլա՛ն, իմ հ'իտոուն փարեն տո՛ւր։

— Տո՛ւր օսկի մի, խուրտիմ, քու փարեն տամ։

Տղեն հարբրնոց օսկի մի կառնի օսկիքներու միճեն, կիտա։ Դիլան հ'իտսուն խուռուշ կը վերու ուրին ու կըսա.

— Ա՛ռ քու հ'իտսուն փարեն։

Էտ հրմալով Դիլան տղի ձեռնեն կազատի։ Հրմա, Դիլան էլման տղին կը խաբա։ Հարիր խուռուշի տեղ հ'իտսուն խուռուշ կիտա ու հ'իտսուն փարա։

Օրթա հարիր խուռուշ թամամ տեր ու հ'իտսուն փարեն լե՝ էն սրհատ կը մեռներ, սուտ կէղներ օղորտ։